



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Կիրակի, 1 Յունուար.- Դ. Կիրակի Յիսնակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Չորեքշաբթի, 4 Յունուար.- Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Աւագ Տօներու առաջին հանդիսաւոր նախատօնակին:

Հինգշաբթի, 5 Յունուար.- Սրբոցն՝ Դաւթի Մարգարէին եւ Յակոբայ Տեառնեղբայր Առաքելոյն (Տօն Առաքելական Ս. Աթոռոյս Երուսաղէմի):

Առաւօտեան ժամերգութեան վերջաւորութեան Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքի ընթացքին մասնաւոր բարեմաղթութիւններ ըրաւ Նորին Ամենապատուութեան բարօր կենաց համար:

Օրուան Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատուցեց եւ քարոզեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: «Հայր Մեր»-էն առաջ Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէջեան նախագահեց Ս. Աթոռոյս հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան պաշտօնին:

Ուրբաթ, 6 Յունուար.- Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Ս. Ստեփաննոսի նախատօնակին: Տօնին բուրվառակիր հայրերն էին Տ. Բարսեղ Ծ. Վրդ. Գալէմտէրեան եւ Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան:

Շաբաթ, 7 Յունուար.- Սրբոցն Ստեփաննոսի նախասարկաւագին եւ Առաջին Մարտիրոսին: Առաւօտեան ժամերգութեան աւարտին Ս. Աթոռոյս բարեշնորհ երեք սարկաւագներ եւ երեք ուրարակիրներ՝ առաջնորդութեամբ երկու բուրվառակիր վարդապետներու, մարգարտագարդ սաղաւարտներով եւ տապանակ ու բուրվառ ի ձեռին, պանծացուցին յիշատակը իրենց մտատիպարին: Արարողութեան նախագահեց Լուսարարա-

պետ Սրբազան Հայրը:

Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւանդատան մէջ գտնուող Ս. Ստեփաննոսի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Խաղ Վրդ. Ծոնտուրեան:

Կիրակի, 8 Յունուար.- Ե. Կիրակի Յիսնակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Խաղ Վրդ. Ծոնտուրեան:

Կէսօրէ ետք, գլխաւոր Առաքելոց նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Երկուշաբթի, 9 Յունուար.- Սրբոց Առաքելոցն՝ Պետրոսի եւ Պօղոսի: Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամատրան մէջ Ս. Պատարագը մատուցեց Տ. Ներսէս Աբղ. Ալոյեան:

Երեկոյեան նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Երեքշաբթի, 10 Յունուար.- Տօն Սրբոց Որդւոց Որոտման՝ Յակոբայ Առաքելոյն եւ Յովհաննու Աւետարանչին: Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ օրուան Ս. Պատարագը մատուցեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Պատարագէն ետք Լուսարարապետ Սրբազան Հայրը ամպհովանիի տակ Ս. Խաչափայտի մատունքն ի ձեռին, նախագահեց մեծահանգէս եռադարձ թափօրին:

Շաբաթ, 14 Յունուար.- Կաղանդ: Տարեմուտ 2023 թուականին Քրիստոսի (Ըստ Հին Տոմարի): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Տ. Արշակ Աբղ. Հազարեան:

Կիրակի, 15 Յունուար.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Յաւարտ Ս. Պատարագի նախագահութեամբ

Լուսարարապետ Սրբազան Հօր կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն Ս. Աթոռոյս երեցագոյն միաբաններէն՝ Տ. Վահան Արք. Թօփալեանի հոգւոյ համար:

Չորեքշաբթի, 18 Յունուար. Ճրագալոյց Մընընդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Առաւօտեան ժամը 9:45-ին Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ Հայ պատրիարքներու գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերու շարանով մը ճամբայ ելաւ դէպի Բեթղէհէմ: Ճամբու կիսուն Յունաց Ս. Եղիա վանքին առջեւ զոյգ Պատրիարքները դիմաւորելու եկած էին Պէյթ-Սահուրի եւ Պէյթ-Ճալայի քաղաքապետները եւ պետական ներկայացուցիչները: Քաղաքի մուտքին, ինքնաշարժներէն դուրս ելլելով, Պատրիարք Սրբազան Հայրերը եւ Միաբանութեան անդամները յառաջացան մինչեւ հրապարակ:

Բեթղէհէմի հրապարակին վրայ դիմաւորելով Բեթղէհէմի քաղաքապետէն եւ պաշտօնատարներէն, «Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ թափօրը բարձրացաւ Մննդեան Տաճարի Հայոց Վանքը:

Յետ միջօրէի ժամը 2-ին զոյգ Պատրիարքներու գլխաւորութեամբ «Հրաշափառ»-ով մուտք կատարուեցաւ Սիւնազարդ Գաւիթէն դէպի Ս. Մընընդեան Տաճարի Ս. Այրը: Ճրագալոյցի Ս. Պատարագը Ս. Այրին մէջ մատուցեալ քարոզեց Կ. Պոլսոյ Հայ Պատրիարք՝ Ամեն, Տ. Սահակ Արք. Մաշալեան: Ապա Լուսարարապետ Սրբազանը նախագահեց Մննդեան նախատօնակին, որմէ յետոյ Միաբանութիւնը զգեստաւորեալ, թափօրով եւ երգեցողութեամբ սիւնազարդ գաւիթէն անցնելով բարձրացաւ Հայոց Վանք: Բակին մէջ կարդացուեցաւ Ս. Մննդեան Աւետարան եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս»:

Երեքշաբթի, 19 Յունուար. Տօն Մննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Կէս գիշերէն առաջ ժամը 10-ին սկսուած գիշերային պաշտամունքէն յետոյ, Միաբանութիւնը իջաւ Ս. Մննդեան Այր, ուր շարունակուեցաւ «Փառք ի բարձունս»-ի երգեցողութիւնը: Ապա Սուրբ Աթոռոյս Գահակալը ներկաներուն եւ համայն հայութեանը փոխանցեց իր Մննդեան պատգամը, որմէ յետոյ պաշտամունքները շարունակուեցան Տաճարին մէջ:

Երկրորդ Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Կ. Պոլսէն հիւրաբար Ս. Աթոռ ժամանած Տ. Յովակիմ Աբղ. Սերովբեան: Յաւարտ Ս. Պատարագի

կատարուած «Ջրօրհնէք»-ի արարողութեան հանդիսապետեց Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան: Ապա Յովհաննու Կարապետի Նախատօնակին հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Ս. Մննդեան Այրին մէջ Երրորդ Ս. Պատարագը մատուց Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան: Պաշտամունքներու աւարտին՝ առաւօտեան ժամը 6:30-ին, Միաբանութիւնը վերադարձաւ Երուսաղէմ:

Երուսաղէմի մէջ Ճրագալոյցի արարողութիւն կը կատարուի Ս. Յարութեան Տաճարին մէջ: Ս. Գերեզմանին վրայ պատարագեց տաճարի տեսուչ՝ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան, որ նաեւ հանդիսապետեց Քրիստոսի Ս. Գերեզմանին առջեւ կատարուած «Ջրօրհնէք»-ի արարողութեան:

Առաւօտեան Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ ապա «Ջրօրհնէք»-ի արարողութեան հանդիսապետեց Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Ուրբաթ, 20 Յունուար. Յիշատակ Մեռելոց: Օրուան Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Խաղ Վրդ. Ծոնտուրեան:

Կէսօրէ ետք նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 21 Յունուար. Ս. Պատարագը մատուցուեցաւ ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի Խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 22 Յունուար. Կէսօրէ ետք Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ Հայ Պատրիարքներու նախագահութեամբ՝ միաբան հայրեր, սարկաւագներ եւ ժառանգաւոր սաներ ինքնաշարժերով մեկնեցան Յորդանան գետ, ուր կատարուեցաւ «Ջրօրհնեաց» արարողութիւն:

Չորեքշաբթի, 25 Յունուար. Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Կ. Պոլսոյ Պատրիարք Տ. Սահակ Արք. Մաշալեան:

Հինգշաբթի, 26 Յունուար. Տօն Անուանակոչութեան Տեառն: Առաւօտեան միաբան հայրեր Կ. Պոլսոյ Հայ Պատրիարք Տ. Սահակ Արք. Մաշալեան Սրբազան Հօր գլխաւորութեամբ, «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Յարութեան Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեալ քարոզեց Ամեն, Տ. Սահակ Պատրիարք Մաշալեան:

Դէպի վանք դարձին, Հայոց Թաղի մուտքէն Միաբանութիւնը «Ղոյս ի Լուսոյ» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան, ուր Ամեն. Տ. Սահակ Պատրիարք Մաշալեանի գլխաւորութեամբ կատարուեցաւ «Տնօրհնէք»-ի արարողութիւն, ապա տեղի ունեցաւ Միաբանական ճաշ՝ աւանդական «հարիսայով»:

Շաբաթ, 28 Յունուար. Տօն Ծննդեան Սըրբոյն Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Աշակողմեան դասին մէջ գնդուող Ս. Կարապետի հորանին վրայ: Ժամարարն էր Տ. Արտէն Քհնյ Աբրահամեան:

Կիրակի, 29 Յունուար. Ա. Կիրակի զկնի Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Բարսեղ Ծ. Վրդ. Գալէմտէրեան: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Շաբաթ, 4 Փետրուար. Սրբոց Հայրապետացն՝ Աթանասի եւ Կիրղի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Խաղ Վրդ. Զոնտուրեան:

Կիրակի, 5 Փետրուար. Բ. Կիրակի զկնի Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ձախակողմեան դասին մէջ գնդուող Ս. Աստուածածնի հորանին վրայ: Ժամարարն էր Տ. Ներսէս Աբղ. Ալոյեան:

Ուրբաթ, 10 Փետրուար. Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց. Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 11 Փետրուար. Սրբոյն Սարգսի Զօրավարին եւ Որդւոյ նորա Մարտիրոսին եւ չորեքտասան զինաւորացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Սարգսի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Արշակ Աբղ. Ղազարեան: Ըստ սովորութեան կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն Ս. Աթոռոյս բարերար Գալուստ Կիւպէնկեանի հօր՝ Սարգիս Կիւպէնկեանի համար, հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Կիրակի, 12 Փետրուար. Գ. Կիրակի զկնի Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Բարսեղ Ծ. Վրդ. Գալէմտէրեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Շաբաթ, 18 Փետրուար. Սրբոյն Իսահակայ Պարթեւ Հայրապետին մերոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Եղիշէ Վրդ. Ուշքունեան:

Կիրակի, 19 Փետրուար. Դ. Կիրակի զկնի Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Չորեքշաբթի, 22 Փետրուար. Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Հինգշաբթի, 23 Փետրուար. Ս. Վարդանանց Զօրավարացն մերոց (1036 վկայիցն): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ, ըստ սովորութեան, պատարագեց եւ քարոզեց Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի տեսուչ՝ Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան: Յաւարտ Ս. Պատարագի հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ, վասն հանգուցեալ պատրիարքաց, միաբանից, երախտաւորաց եւ զինաւորաց:

Ուրբաթ, 24 Փետրուար. Առաւօտեան միաբան հայրեր մեկնեցան Ասորւոց վանք: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Մարկոս Աւետարանչի եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետեց եւ Պատարագի ընթացքին քարոզեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Արտէն Քհնյ Աբրահամեան:

Շաբաթ, 25 Փետրուար. Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն հարիւր յիսուն հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարի Աւագ խորանը, սեղանները եւ գլխաւոր սրբապատկերները, «Համբարձի» շարականը երգուած ժամանակ վարագուրուեցան Պատրիարք Սրբազան Հօր, Գերաշնորհ, Հոգեշնորհ եւ Արժանապատիւ Հայրերու ձեռքով:

Կիրակի, 26 Փետրուար. Ա. Քառասնորդաց: Բուն Բարեկենդան: Փակեալ հորանի Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց Տ. Բարսեղ Ծ. Վրդ. Գալէմտէրեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան:

Կէսօրէ ետք, Տեառնընդառաջի մեծահանդէս նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, որմէ ետք կատարուեցաւ «Անդաստան» եւ մոմավառութիւն, նախագահութեամբ՝ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Եկեցէ»-ի հսկման կարգը: Հանդիսապետն էր Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Երկուշաբթի, 27 Փետրուար.– Տեառնընդառաջ: Տօն Քառասնորեայ Գալստեանն Քրիստոսի ի Տաճարն: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցել քարոզեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Ուրբաթ, 3 Մարտ.– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 4 Մարտ.– Սրբոյն Թէոդորոսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գրլխադիր: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան:

Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Քրիստոսի Ս. Գերեզմանին երկրպագելէ ետք Հայոց վերնամատրան մէջ պաշտուեցան Երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը, ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութիւն, Թափօր տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Նղիշէ Վրդ. Ուչքունեան:

Կիրակի, 5 Մարտ.– Բ. Քառասնորդաց. Արտաքսման: Առաւօտեան ժամը 5:30-ին միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ մեր վերնամատրան մէջ՝ հանդիսապետութեամբ Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեանի երկրորդ մուտքէն վերջ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագիչն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ եռադարձ մեծահանգէս Թափօր Քրիստոսի Գերեզմանին եւ մէկ անգամ Պատանատեղւոյն շուրջ, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Շաբաթ, 11 Մարտ.– Սրբոյն Կիրղի երուսաղիմայ հայրապետին եւ միւս Կիրղի Եպիսկոպոսին եւ մօրն նորա Աննայի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան մէջ գտնուող Ս. Կիրղի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Խաղ Վրդ. Ճոնտուրեան: Ս. Պատարագէն ետք, կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ, վասն հոգւոցն Սուլթանի, Կարինէի, եւ ծնողացն Կարապետի եւ Մարիի եւ Կիրեղեան գերդաստանի հոգիներուն ի հանգիստ, հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Կիրակի, 12 Մարտ.– Գ. Քառասնորդաց. Անառակին: Առաւօտեան ժամերգութիւնն ու Ս. Պա-

տարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարան էր Տ. Ներսէս Աբղ. Աղոյեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Բարսեղ Ծ. Վրդ. Գալէմտէրեան:

Շաբաթ, 18 Մարտ.– Սրբոյն Յովհաննու Երուսաղէմայ Հայրապետին եւ Հայրապետին մերոյ՝ Յովհաննու Օձնեցւոյն եւ վարդապետացն մերոց Յովհաննու Որոտնեցւոյն եւ Գրիգորի Տաթեւացւոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Կիրակի, 19 Մարտ.– Դ. Կիրակի Քառասնորդաց, Տնտեսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին, աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Արշակ Աբղ. Ղազարեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Շաբաթ, 25 Մարտ.– Սրբոց Մանկանցն Քառասնից Որք ի Սեբաստիայ կատարեցան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Գլխադիր: Ժամարարն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններէն հիւրաբար Ս. Աթոռ գտնուող Տ. Զաքարիա Ծ. Վրդ. Բաղդումեան: Վերաբերումը կատարուեցաւ Քառասուն Մանկանց նկարին առջեւ շտկուած Սեղանին վըրայէն, որուն դիմացը կաթսայի մէջ կը պլպլային քառասուն գոյնզգոյն կանթեղներ, աւանդական սառցապատ լիճը խորհրդանշող:

Կէսօրէ ետք Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Գերեզմանի եւ Գիւտ Խաչի այրին ուխտերէն ետք, վերջնոյս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան Երեկոյեան ժամերգութիւնն եւ նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութիւն՝ Թափօր, տաճարէն ներս: Թափօրապետն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններէն հիւրաբար Ս. Աթոռ գտնուող Տ. Զաքարիա Ծ. Վրդ. Բաղդումեան

Կիրակի, 26 Մարտ.– Ե. Կիրակի Քառասնորդաց: Դատաւորին: Առաւօտեան ժամը 6:30-ին միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան տաճար, ուր Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յարութեան տաճարի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան:

Լուսարարապետ Սրբազան Հօր երկրորդ մուտքէն ետք, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, օրուան Ս. Պատարագը մատուցել քարոզեց

հանդիսապես Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Պատարագէն վերջ Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղւոյն շուրջ կատարուած եռադարձ մեծահանդէս թափօրին, որ աւարտեցաւ Ս. Գրի-

գոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, նախագահեց պատարագիչ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան Սրբազան Հայրը:

Պատրաստեց՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՐԿ. ԽՈՒՏԱՎԵՐՏԵԱՆ

